բոր տունը թէյ խմելուց յետոյ խմբովին զուռնայի և թմբուկի նւագածութեամբ և պարելով գնում են բաղնիս թագաւորին վերցնելու, ուր լողանալիս է լինում։ Բաղնսի դռան առաջ «թագաւորը» համբուրում է բոլոր հանդիսականների ձեռքերը, իսկ նրա մօտիկ ազգականները համբուրում են նրա երեսը և գրպանում շաքար ածում կամ վզին մետաքսէ թաշկինակ կապում։ Ապա այդտեղից թագաւորին տանում են եկեղեցի, ուր նա ուխտ է կատարում։ Այնուհետև թագաւորի մօտիկ ազգականներից մէկը վերցնում է նրան և տուն տանում, իսկ հասարակութիւնը եկեղեցուց գնում է հարսին բաղնսից դուրս բերելու. նրան էլ նէրներ են տալիս, յետոյ տանում եկեղեցի ուխտի, ապա վերադառնում են նրա տունը և թէյ խմելուց յետոյ ցրւում են։

Այդ երեկոյեան թագաւորի տանն ընթրիք են տալիս մօտ 2—300 հոգու, ուր հրաւիրւածները «ծաղիկ» (փող) են տալիս փեսին 1 դրանից մինչև 10 թուման և կամ մի գլուխ դանդ կամ մի զոյգ գուլպայ, իրենց կարողութեան չափով։ «Ծաղիկ»ը ժողովւում է հետևեալ կերպով. երբ «մէջլիսը» (ժողովականները) հաւաքւում է, հրաւիրեալներից մէկը կանգնում է մի անկիւնում և ստանալով իւրաքանչիւրի նէրը, բարձրաձայն գոչում է.

—Ջամիաթ (ով մարդիկ, ժողովուրդ), շէն կենայ (ենթադրենք Յովհաննէսը), մի թուման բերել է թագաւորին, մէկէլ էս օրս (եկող տարի այսօր ևս) իրա ազաքներին (անպսակներին)։

Ենորհաւորական նէրները հաւաքելուց յետոյ, որ լինում է 30—40—50 թուման, յանձնում է փեսայի հօրը։ Այնուհետև զուռնաչին գնում է հարսնացուի տունը և հինայ է բերում, որ դնում են թագաւորի ձեռքերին։ Ապա խմբովին թագաւորի տնից տանում են հինէն հարսնացուին, որպէսզի ձեռքը հինայեն, բայց նա ձեռները բաց չի անում. այդ ժամանակ սկեսուրը նրա ձեռքում փող է ածում, իսկ կեսրայրն էլ երեկոյեան՝ հաւաքւած «ծաղիկ»ը (փողը) տալիս